ԱՇՈՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Գիտաստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում վախճանվեց ականավոր հայագետ, գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Աշոտ Արսենի Աբրահամյանը։

Ա. Աբրահամյանը ծնվել է Սևանի շրջանի Գեղավան գյուղում, հողագործի ընտանիքում։ Տարրական կրթությունը ստացել է գյուղում, միջնակարգը՝ Երևանում։ 1937 թվականից իրեն նվիրել է մանկավարժական գործունեության։ 1943 թ. փայլուն կերպով ավարտել է Երևանի հիանալի մանկավարժական ինստիտուտը, 1948 թ. պաշտպանել է թեկնածուական, 1963 թ.՝ դոկտորական դիսերտացիա, 1964 թ. ստացել պրոֆեսորի կոչում։ 1944 թ. անընդմեջ աշխատել է Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում՝ դասավանդելով գրաբար, հայոց լեզվի տեսություն, լեզվաբանության ներածություն։ 1961 թ. մինչև կյանքի վերջը նույն ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի վարիչն էր։ 1950—1959 թթ. աշխատել է նաև Հայկական ՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող և ժամանակակից հայերենի բաժնի վարիչ, իսկ 1977 թ.՝ համաբարբառ քարտարանի բաժնի վարիչ։

Մեծ է Ա. Աբրահամյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը։ Դրեթե չկա հայոց լեզվի մի բնագավառ, որի մասին նա ասած չլինի իր ծանրակշիռ խոսքը։ Բավական է ասել, որ նա հեղինակ է շուրջ 80 գիտական աշխատությունների, որոնք ունեն հիմնականում լեզվաբանական-քերականագիտական և բանասիրական-տեքստաբանական բնույթ։

Լեզվաբանական-քերականագիտական աշխատություններից առաջինը 1952 թ. լույս տեսած է հետագայում երեք վերամշակված հրատարակություն ունեցած գրաբարի բուհական ձեռնարկն է, որը լավագույններից է իր տեսակի մեջ և որով շուրջ երեք տասնամյակ ուսանողությունը (և ոչ միայն ուսանողությունը) սովորում է գրաբար։ Թեև այն համարվում է ձեռնարկ, սակայն ըստ էության հին հայերենի գիտական խոր և համակողմանի ուսումնասիրություն է։

Իր գիտական գործունեության զգալի մասը Ա. Աբրահամյանը նվիրել է բայի ուսումնասիրությանը։ Դեռևս 1953 թ. լույս ընծայած «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» աշխատության մեջ նա սպառիչ մանրամասնությամբ տվեց հայերենի դերբայական համակարգի զարգացման պատմությունը, դերբայների դրսևորումները գրաբարում, միջին հայերենում, բարբառներում և ժամանակակից հայերենի երկու տարբերակներում։

Բայի ուսումնասիրության ուղղությամբ կատարած գիտահետազոտական աշխատանքների տնտրագումարը և բարձրակետը եղավ 1963 թ. լույս տեսած «Բայը ժամանակակից հայերենում» ստվարածավալ և մեծարժեք մենագրությունը, որտեղ ամենայն խորությամբ և փաստական հարուստ նյութի հիման վրա համակողմանիորեն քննության է առնված ժամանակակից արևելահայ գրական լեզվի բայական համակարգը։

Հոդվածների միջոցով Ա. Աբրահամյանն անդրադարձել է նաև հայոց լեզվի պատմության և ժամանակակից հայերենի առանձին, հատկապես կենդանի և լուսաբանության կարոտ հարցերի, որոնց լուծման ընթացքում ևս երևան է գալիս Աբրահամյան-հետազոտողի պրպտուն միտքը, երևույթների խորքը թափանցելու, դրանք մեկնաբանելու և գիտական ընդհանրացում կատարելու մեծ կարողությունը։

Մեծ է Աբրահամյան-գիտնականի վաստակը նաև դասական մատենագրության երկերի թարգմանության և հրատարակության պատրաստման գործում։ Այս բնագավառի աշխատանքներից առանձնապես պետք է նշել Սղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ի թարգմանությունը արեւելահայերեն և հրատարակությունը ընդարձակ ներածականով ու 495 բանագիտական, լեզվաոճական բնույթի ծանոթագրություններով։ Գիտական արտակարգ բարեխղճությամբ կատարված այս աշխատանքը մեծ ներդրում է եղնիկագիտության բնագավառում և բացառիկ է իր տեսակի մեջ։

Ա. Աբրահամյանը մասնակցել է Ագաթանգեղոսի, Բուզանդի, Եղիշեի, Կաղանկատվացու և այլոց երկերի խմբագրման ու հրատարակության հայրենանվեր գործին։ Նույնպիսի նվիրումով նա մասնակցել է նաև դրաբարի համաբարբառ քարտարանի կազմման սկզբունքների, համաբարբառների խմբագրման դժվարին գործին։

Ա. Աբրահամյանը մեկն էր մեր այն նշանավոր գիտնականներից, որն իր գիտական գործունեությունը միշտ զուգակցել է մանկավարժական գործունեությանը՝ իր հարուստ գիտելիքներն ու փորձը հաղորդելով սերունդներին և ակտիվորեն մասնակցելով մանկավարժական կարեւոր պատրաստիլու գործին։ Հաղորդվող նյութի խոր և համակողմանի իմացություն, մատչելի ու հետաքրքիր, միաժամանակ գիտական խորությամբ մատուցում, ահա ինչով են միշտ բնորոշվել նրա դասախոսությունները։

Մեծ էր նաև Ա. Աբրահամյանի երախտիքը գիտական կադրերի պատրաստման գործում։ Նրա ղեկավարությամբ թեկնածուական դիսերտացիա պաշտպանած շատ ու շատ լեզվաբաններ մանկավարժական ու գիտական աշխատանք են կատարում հանրապետության բուհերում ու գիտահետազոտական հիմնարկներում։

Ա. Աբրահամյանը նաև ակտիվ հասարակական գործիչ էր։ Գիտամեթոդական հոդվածներով, դասախոսություններով նա օժանդակում էր հայոց լեզվի դասավանդման դրվածքի բարելավմանը դպրոցում։

Ա. Աբրահամյանի վաստակի արժանի գնահատականն էր 1965 թ. նրան Հայաստանի գիտության վաստակավոր գործչի կոչում շնորհելը և 1977 թ. ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ ընտրելը, իսկ գիտամանկավարժական և հասարակական գործունեության գնահատականը՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանն ու Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրերը։

Բազմավաստակ գիտնականը գտնվում էր իր գիտական-ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում, երբ հանկարծակի կտրվեց նրա կյանքի թելը։ Անվանի գիտնականի, ազնիվ քաղաքացու, լավ ընկերոջ հիշատակը հավերժ կմնա իր գործընկերների և աշակերտների սրտերում։

ՆՎԱՐԴ ՊԱՌՆԱՍՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր